Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lin
266

1999

43840-4.h.

Արշալոյս Արարատեան Օրագրին 403=406 Թիւերուն Բանասիրականին մէջ Ազգասիրի մը յօդուածներուն վրայ

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

Ազգի մը կամ ժողովրդեան մը մէջ որչափ ալ գիտութիւնը ծաղկելու ըլլայ, և գիտնոց բազմութիւնը օրէ օր գովութեամբ հռչակին, դարձեալ զարմանք չէ որ մեծանուն գիտուններն ալ երբեմն իրենց առանձին կարծեացը մէջ սխալին, ու մէկմէկու հետ վիճին, և հարկաւոր ըլլայ հասարակաց իմաստնոց կարծիքը ու դատաստանը զանոնք ուղղելու. բայց զարմանքը այն է՝ երբոր մասնաւոր ազգ մը կամ մարդ մը ընդհանուր ծաղկեալ և իմաստուն ազգաց քննած, ստուգած և ընդունած ճշմարտութեան դէմ ելլայ ու իր առանձնական նախապաշարմամբ և կամ տգիտութեամբ ունեցած կարծիքը ուզենայ պաշտպանել. և այն ոչ թեթև նիւթի մը, այլ հաւատքի ծանր և իրմէ վեր եղած խնդրոյ մը մէջ, հանդերձ տգիտութեան, մոլորութեան և հերձուածողութեան նախատինք մը բերելով իրեն նախապաշարմանը դէմ եղող ազգաց և եկեղեցեաց վրայ:

Այսանկ մէկ վէճ մը կամ համարձակախօսութիւն մը կը տեսնանք ցաւով սրտի այս մօտերս մեր ազգային օրագրաց մէկուն մէջը, ուր ամենևին չէինք ուզեր ու չէինք կարծեր տեսնելու, այն է Արշալոյս Արարատեան Զմիւռնիոյ պատուական օրագրին մէջ՝ մէկ անանուն Ազգասէր անձէ մը շարագրած և հաղորդուած որ հրատարակէ ընդդէմ Հայաստան օրագրոյն շարագրողին: Այդ ազգասէր անձին, որուն ով ըլլալը աղէկ է որ չենք գիտեր, ուսումնական վիճաբանութեանը համար ամենևին ըսելիք մը չէինք կրնար ունենալ, մանաւանդ թէ կը գովէինք ալ, թէ որ ճշմարիտ իմաստնոյ և ազ-

N 2142
516
28270
27077-62
(266-60)

գասիրի վայլած ծանր և ազատ ոգը պահած ըլլար ամէն տեղ, և անուանը համեմատ առաքինական ազգասիրութիւնը երևցընելով՝ խնացընէր թէ իր կամքը Ճշմարտութիւն միայն փնտռէլ է, և ոչ հակառակորդը խոցել և վիրաւորել, որ ոչ թէ սիրոյ՝ այլ ատելութեան գործք մը կ'ըլլայ՝ թշնամութիւն և հերձուած ձգելով ազգին մէջ. որովհետև ազգը մանաւորներէ կը բաղկանայ, և ամէն մանաւոր ալ քիչ շատ իրեն կուսակից-ներն ալ կ'ունենայ։

Բայց եւեթ ցաւալին այն է՝ որ ազգասիրութիւն ընել կարծելով՝ անանկ իրմէ վեր ինդրոյ մը մէջ կը մտնայ և յանուն ազգին և ազգային եկեղեցւոյն վնասներ կու տայ, որով բովանդակ ազգը ատելի ու զզուելի կ'ուզէ ընել բոլոր աշխարհքի ազգաց և ազանց առջին. և չէ թէ միայն ազգ ազգի և եկեղեցի եկեղեցւոյ դէմ, հապա սուրբ սուրբի ալ դէմ և թշնամի կը հանէ. մեր մեծանուն, հեզահոգի ու իմաստուն քերթողահայրը՝ Խորենացին Մովսէս՝ Հռոմայ տիեզերահռչակ Լևոնի հզօր հայրապետին դէմ, ոչ չըսուելու բան, հերքող և նզովող կը հանէ. և ո՞ր ազգասէր ականջ կրնայ լսել սանկ հայհոյութիւն մը ու չսոսկալ, ո՞ր ազգասէր և Ճշմարիտ քրիստոնեայ կրնայ ըսել՝ թէ Մովսէս մը, Նղիշէ մը, Նարեկացի մը, Շնորհալի մը, Լամբրոնացի մը, որ հայաստանեայց եկեղեցւոյն սուրբերը ու հիմունքներն են, Բաղկեդոնի տիեզերական սուրբ ժողովքը իր սուրբ հայրապետներովը հերքած ու նզոված ըլլան, ու չզարհուրիլ։ Այս է որ սոսկալուց զմեզ ալ և ստիպեց որ մեր ազգասէր սրտին խոր տխրութիւնը ու սոսկալի ցաւը յայտնենք, այս համառօտ յայտարարութեամբս, զորն որ չենք ուզեր երկնցընել Բաղկեդոնի տիեզերական ժողովքին ուղղութիւնը ու սրբութիւնը ցուցընելով, և ոչ անոր պատմութիւնը ընելով, և թէ ինչպէս եղեր է՝ որ մեր ազգին մէջ երբեմն ոմանց միտքը ծուռ կարծիք մը մտեր է այն սուրբ ժողովքին վրայօք. որովհետև ատոնք տեղն 'ի տեղը ուրիշ տեղուանք պրուած և բաւականապէս ցուցուած են այնպիսի մարդիկներէ, որ Ճշմարտութիւնը փնտռելու ու Ճանչնալու կարողութիւնը ունենալէն 'ի զատ, կրնանք ըսել թէ ազգին սիրոյն համար ալ զոհ

եղեր են։ Այս թէ որ այն գրուածքները բաւական չեն եղած այդ անուանեալ Ազգասէրը և իրեն կուսակից-ները՝ թէ որ ունի՝ համոզելու, նշան է՝ թէ այնպի-սեաց համոզուելու կամք կը պակսի և ոչ թէ գրաւոր տեղեկութիւններ։ Այդ պատուական Ազգասէրը ինք իր հակառակորդին դէմ խօսելով կ'ըսէ թէ "Ի՞նչ ան-ակնկալ գէր՝ որ Վենետիկի հայկական լեզուի դեղուաջան մը, զանիներէն մինչև հիմա անոյշոյ ճաշակ Հարանց Վարդին հեղի-նակը Ղամուրճեան Պապուելին երիտասն կը հանէ"։ ինք ուրիշ շատ տեղ նոյն Վենետիկի դեղուաջան հշակոց վը-կայութեամբը իր պատմական տեղեկութիւնները հաս-տատել կը նայի, որուն համար մեծապէս շնորհակալ ենք որ այդ պատուոյն արժանի կը սեպէ զանոնք։ Բայց թէ որ իրացընել կ'ընդունի այդ պատուական Ազգա-սէրը թէ այն Վենետիկի դեղուաջան հշակները այնչափ հետամուտ են հայկական լեզուին ու պատմութեանը վերաբերեալ ճշմարտութիւնները փնտռելու և գտնա-լու, պէտք է ընդունի որ եկեղեցական ու հաւատքի վերաբերեալ ճշմարտութեանցն ալ, որ ամենէն մեծ ու հարկաւոր ճշմարտութիւններն են, նոյնպէս և աւելի ևս հետամուտ եղեր են քննելու և գտնալու, և թէ՝ գիտէ որ անոնք Պաղկեդոնի սուրբ ժողովքը կ'ընդունին և կը ջատագովեն, ինչպէս որ ինքն ալ տեղ մը կը գրուցէ Ղամչեան Հ. Ալիքայել վարդապետին համար։ թէ "Իբրև ջատագովէ Քաղկեդոնեան ժողովոյն անոր կը ներսուէ"։ պէտք էր ուրեմն՝ որ ինչպէս ազգային ուրիշ բաներու մէջ՝ նոյնպէս այս բանիս մէջ ալ՝ գլուխ ծռելով անոնց այնչափ հետամտութեամբը քննած և ստուգած ճշմարտութեանը՝ չհամարձակէր այնպէս համարձակ հերքելու և նզովելու ընդհանրական եկե-ղեցւոյ տիեզերական մէկ սուրբ ժողովքը և այնպիսի տիեզերահռչակ սուրբ հայրապետ մը, և այն՝ բոլոր ազգին և Հայաստանեայց եկեղեցւոյ կողմանէ։ Այ թէ Ռաբկէն մը առանց աղէկ տեղեկութիւն առնելու՝ թշնամեաց խօսքին նայելով, ու Օ. Էնոն ինքնակալի մը հրամարտակին, որ հաւատքի ինդիրներուն մէջ չէր կրնար ամենևին իրեն կանոն ըլլալու ընդդէմ այնչափ տիեզերական սուրբ հայրապետաց ժողովոյն որոշմանը, իր չգիտցած բանը հերքեց ու նզովեց։ եթէ՝ Այերսէս

Շինող մը նոյնպիսի տգիտութեամբ մերթ հերքեց ու
նզովեց բանիւ զՔաղկեդոնականները, և մերթ գնաց
գործով միացաւ ու հաղորդուեցաւ անոնց հետ. եթէ
Աբրահամ կաթուղիկոս մը նոյնպէս տգիտութեամբ
սխալեցաւ. ինչո՞ւ զանոնք միայն կը տեսնայ այդ մեր
պատուական Ազգասէրը, ու չի տեսնար մէկալ այնչափ
երևելի, անուանի ու ազգերնուս պարծանք եղող աս-
տուածարեալ հայրապետները, Իմաստասէրը, Եզրը,
Նարեկացին, Սահակը, Շնորհալին, Գրիգոր Տղան,
և Ներսէս Լամբրոնացին, որոնք բանիւ և գործով,
քննութեամբ և ճանաչմամբ, ազգով և ժողովով ընդ-
ունեցան այս ճշմարտութիւնը. ինչո՞ւ չլսեր Գրիգոր
տղայ կաթուղիկոսին որ կը կանչէ "Եթէ զՅովհան-
„նէս ասեմք Իմաստասէրն որ և աթոռակալ սրբոյ
„Աթոռոյս, և նա այսոցիկ հետևեցաւ շաւղաց ուղ-
„ղափառութեան, և մերն այլ սուրբ նախնիք զնորայն
„ընկալան զխոստովանութիւն, և ձեռնադրեցին զգիրս
„նորա անխախտելի մնալ, Գրիգոր վկայասէր, և
„Բարսեղ հետևող նորին և միւս Գրիգորիս և Ներ-
„սէս մեր հարք, և է յարկեղս գրոց մերոց (գիր Ի-
„մաստասիրին) ընկալեալ 'ի նոցանէ„: Ինչո՞ւ չլսեր,
կ'ըսեմք, երանաշնորհ Լամբրոնացւոյն որ Պօղոսեան
հոգւով աղեկեզ ձայնիւ կը գոչէ "Բարք մարդկան
„հակառակասէր է, զայնս որ ճշմարտութեանն էր
„ջատագով և խաղաղութեանն՝ անգոսնեցին, և զա-
„թշնամութիւն մարզիչ բանսն՝ սիրեցին և գրեցին:
„Ապա թէ ոչ՝ ո՞ւր դիցուք զբանս Յովհաննու Իմաս-
„տասիրին և հայրապետին որ զայս առ մեզ վկայու-
„թեամբ հարցն սրբոց ստուգէ, զԵզրի հայրապետին
„և զիւրոյ ժողովոյն զհաւանութիւնն, զՍահակայ
„հայրապետին զհամաձայնութիւնն առ մեծ եկեղե-
„ցին Հռոմայ, և զնորին հետևողաց թագաւորացն
„և վարդապետաց: Յորոց մի էր և իմն աստուածա-
„շնորհ, և յոգունց գերազանց հրեշտակն 'ի մարմնի
„Գրիգոր Նարեկացի: Ո՞ւր և զորոյ աչօք տեսէք և
„բանիցն աշակերտ էք և հիմանն արկելոյ շինիչք՝ զսըր-
„բոյ հօրն մերոյ Ներսիսի զայսմ հետևողութիւն„:
Ասոնք բոլոր միթէ Հայաստանեայց եկեղեցւոյ հայրա-
պետները չե՞ն՝ ու միայն Բաբկէն, Ներսէս Շինող ու

Աբրահամ Կաթուղիկոսներն են, որոնցմով կը պարծի այդ Պատուական ազգասէրը. չէ նէ մի Հաղբատայ անապատը բռնեալ Թանձրապորտ Տուտէորդին է ու անոր նման հակառակասէր և ազգախռով մարդիկ որ մինչև այս դարուս սկիզըները կ'երևնային, և քիչ մը առենէ 'ի վեր պակսած ըլլալով, մեծ ակնկալութիւն մը կուտային ճշմարիտ ազգասիրաց, որ անցեալ տգիտութեանց հետ կամաց կամաց անոնց կանխակալ վրիպակներն ալ ուղղուելով ճշմարտախնդիր ազգերնուս մէջէն, սիրոյ ու խաղաղութեան օրերը կը մօտենան. և հիմա նորէ՞ն մի պիտի սկսին նոյն թշուառ ու ցաւալից օրերը: Թէ որ այդ պատուական Ազգասէրը այդպիսի նախապաշարեալ կամ հակառակասէր անձինքներով նոր մէկ եկեղեցի մը կ'ուզէ շինել, զորն որ չենք կարծեր ամենևին, առնէ թո՛ղ կու տանք սիրով՝ կարճիկ Մանուէլներն ալ, Սափրիչներն ալ, Տաթևացիներն ալ, Տուտէորդիները, Մայրագոմեցիները, Պօղոս տարօնացիները և դեռ որչափ որ կան նէ, բայց թողու մեզի մեր անման Խորենացիները, Իմաստասէրները, Վահանները, Նարեկացիները, Եղբերը, Ներսէսները ու Գրիգորները, որոնք աղէկ գիտէին ու կը ճանչնային որ Քրիստոսի Տեառն մերոյ ընդհանրական և առաքելական սուրբ եկեղեցին մի է՝ երկուք չկրնար ըլլալ, ևս առաւել ամէն ազգաց մէկմէկու հակառակ առաքելական եկեղեցիներ չեն կրնար ըլլալ, և մինչև որ մասնաւոր եկեղեցի մը ընդհանրականին հետ միացած չըլլայ, բաժանեալ է, միոյ մարմնոյ անդամ չէ ու չի կրնար ըլլալ. անոր համար ընդհանրական եկեղեցիին հետ սէր ու միութիւն ընել ու պահել կ'ուզէին:

Հիմա անանկ է նէ կը հարցընենք մեր Ազգասիրին. եթէ Բաղկեդոնի տիեզերական սուրբ ժողովքը մոլորական հերքեալ և նզովեալ է, եթէ Լևոն Հռովմայ սուրբ հայրապետը մոլորեալ և նզովեալ է, ինչ կ'ըլլայ բովանդակ Հռովմէական եկեղեցին որ զնոյն ժողովքը և զսուրբ Լևոն հայրապետը կ'ընդունի, կը ջատագովէ, կը պատուէ և անոնց վարդապետութեանը կը հետևի, ուրեմն ինքն ալ սխալած ու մոլորած է, մոլորեալ են և Յոյները՝ անոր տարակոյս չկայ, ուրեմն կը մնայ միայն այս պատուական Ազգասիրին

ձևացուցած խեղճ Հայաստանեայց եկեղեցին, քանի մը ամենախեղճ Պարոյներով ուղիղ անմոլար Քրիստոսի ընդհանրական, սուրբ և առաքելական ըսուած եկեղեցին բաղկացընողը։ Ո՛հ, լալու բան. Հռոմէական եկեղեցին՝ մայր և գլուխ եկեղեցեաց, որ բոլոր Եւրոպա, Ամերիկա, Աֆրիկէ և Ասիա ամէն ազգաց մէջ տարածուած, և ամէն աշխարհք Հնդկաստան, Ամերիկա, Ճենաստան և Ավկիանիա կը խաբէ իր առաքելական քարոզիչները դարձընելու անհաւատները, կեանքերնին զոհելով ու մինչև արիւնին ալ թափելով, մոլորեալ է, և Քրիստոսի եկեղեցի չէ, ու միայն այն Հայաստանեայց եկեղեցին է Քրիստոսի առաքելական եկեղեցին, որ մտացի մարդ կրնայ ըսել ասիկակ ու չիլալ։ Շատ բան կայ դեռ ասոր վրայ զրուցելու, որոնց թէ ամէնը ըսել ուզենայինք, մատեաններ կ'ըլլային, բայց իմաստունը քիչէն շատը կրնայ հասկընալ։ Շատ աղէկ կ'ընէր մեր պատուական Ազգասէրը թէ որ իր այն սկզբանը վրայ երթալով, ու "Եկեղեցոյ վճիռը եմ կամ Պապուելէին կամ այլ որ ի՞ էջէ մասնաւոր աշխարհականէ կամ եկեղեցականէ պապասպանէ պակ էնոր,, ըսելով՝ լռէր, ու ասանկ եկեղեցական խնդիրներու մէջ չմտնար 'ի վնաս և 'ի գայթակղութիւն ազգին։ Ամն զի խիստ դէմ ընդդէմ ու հակասական կ'երևնայ, որ մէկը օտարին դէմ վրէժխնդիր ըլլայ, թէ ինչու իր սիրելի ազգը հերետիկոս ու հերձուածող կը կոչէ, ու ինքը բարձր 'ի գլուխ քարոզելով և "Յայտնի է ամենայն քրիստոնեայ ազգաց որ Հայերը կը հերետիս ու կը նզովին ղուրանները,, ըսելով՝ ինքը զինքը հերձեալ ու բաժանեալ քարոզէ արևմտեան ու արևելեան եկեղեցիներէն։

Շատ աղէկ կ'ընէր դարձեալ որ իր անհիմն և ծուռ կարծիքներն ալ իբրև յայտնի ճշմարտութիւն չուզենար հաստատել։ Ա՛ուզէ որ մեր աստուածարեալ ծերունին Մովսէս Խորենացին ալ, որ Դագրևանդայ և Ամշարունեաց եպիսկոպոս էր, բերէ խոթէ Դաբկէն Կաթուղիկոսին ժողովքին մէջ. անոր համար մեր 1851 Մարտ ամսոյն Դաղմալիպին մէջ կարծիքով մը ու գուշակութեն ծերունւոյն կենացը յերկարաձգումը իրեն վկայութիւն կ'առնու. բայց գիտնայ նախ՝ որ թէ և կենդանի եղած ըլլար այն ժամանակը Խորենացին՝

հարիւր քսան տարին անցուցած ծերունի մը՝ եպիսկոպոսութիւն ալ թերևս չէր կրնար ընել թող թէ ժողովքի երթալ։ Գրիգորդ՝ Նազիանզէնին այն յօդուածը շարադրողը, որ ազգային պատմութեանը որչափ հըմուտ է՝ նոյնչափ ալ անզգաստ հետամուտ, կ'իմացընէ իրեն որ այն գրելէն ետև՝ ստոյգ յիշատակարաններու ու գաւազանագրաց մէջ գտած է, որ Խորենացւոյն եպիսկոպոսութենէն ետքը՝ Ընշարունեաց եպիսկոպոսութիւնը որ Ներսեսեան սկսեալ Նազրևանդայ Ներսեսոյն հետ մէկ էր և անկէ ետև բաժնուելով՝ յաջորդաբար նստեցան հոն Խնդակ կամ Կնդակ, Յովհան և Դաւթաւ, այս վերջինը Դաւթաւ կը գտնուի Նաբկեանի ժողովքին մէջ։ Որով կ'իմացուի թէ գոնէ Խորենացիէն քանի մը տարի ետքը եղած պիտի ըլլայ ժողովքը որ իրեք եպիսկոպոս կարենան յաջորդել մէկմէկու ետևէ։ Ընկէց կ'իմացուի նաև թէ որչափ անյարմար, անտեղի, չկարծուելու ու չըսուելու բան է որ մեր Ընդգասէրը այն իրեք տուն անուշ, անարուեստ, անձառնի ու ամօթալի նզովքի շարականը՝ մեր սուրբ Ճարտար ու վսեմախօս Խորենացւոյն քերանը կ'ուզէ դնել՝ որ քիչ մը ուժ առնու։ Որուն համար կը զարմանանք թէ ինչպէս ինքը, որ Գրիգոր Ա. Կայսաբերին ընդդէմ հայհոյանոլեանմբ ու վնեմ ոճով շարադրուելանը ու Հարանց վարդին անալի և սպորին ոճին մէջ եղած զանազանութիւնը իմանալով՝ կը հրաւիրէ ընթերցողը սիրելի ազգաբնակներն ու միայն իրենք չուզեցին ըսել ատ նզովքը, այլ և բոլորովին ծածկել ու անհետ ընել ջանացին որ ժողովուրդն ալ չըսէ, և Ոսկան վարդապետ որ առջի շարական տպողը եղաւ՝ չտպեց այն իրեք տունը, որ հին գրչագրաց մէջ ալ չկան։ Բայց երբ որ

հակառակասիրութիւնը տգիտութեամբ ու կրօնքի կոյր նախանձաւորութեամբ եղբայր եղբօր դէմ կռուի կը հանէր, նորէն ու նորէն աւելն խռովեցին տպագրութեանց մէջ։ Այսպէս ալ Սարգիս Շնորհալիին կաթողիկեայց թղթոց մեկնութեանը մէջ՝ սրբոյն Լեւոնի անունը ուրիշ հերետիկոսաց կարգը դրուիլը. զորն որ վկայութիւն կը բերէ մեր Ազգասէրը, առանց թերեւս կարդալու կամ յիշելու Զամչեան Պատմ. Գ. հատորին 398 երեսը գրուածը. թէ ինչպէս նոյն ձեռագիր օրինակը՝ որուն վրայէն շարուեր և տպագրուեր է այն Կոստանդնուպօլսոյ (Հայոց թուականին 1192) տըպուածը, ձեռք ինկալով իբրեւ գանձ անգին կը պահուի մեր մատենադարանը, որուն մէջ կ՚երեւայ յայտնի բանին ինչպէս ըլլալը. վասն զի երկու այն տեղուանքն ալ, զորոնք Ազգասէրը կը նշանէ, ձեռագրին գրուածը աղէկ մը քերթած որ չիկարդացուի, ու վրան նոր ու նոտրգիր սրբոյն Լեւոնի անունը գրեր են. զորոնք ուրիշ (ՉԿԶ թուականին գրուած) ընտիր գրչագրի մը հետ ալ բաղդատելով՝ աջլի տեղի քերթըւած բառը կը գտնանք Սեւերիանոսի Անտիոքացւոյ անունը, որն որ Լեւոն Հռովմայեցւէ փոխուեր է. իսկ երկրորդ նշանակուած տեղը այն մէկալ գրչագրին մէջ՝ որովհետեւ քանի մը ուրիշ հերետիկոսաց անուններ կը պակսի, չիմացուիր թէ քերթըւածը ինչ անուն է եղեր զորն որ Լեւոնի փոխեր են։ Ասոնցմէ կրնայ իմացուիլ մէկալ Մաշտոցին ու քահանայից ձեռնադրութեան մէջ եղածներուն ալ ինչպէս և որոնցմէ խռովուած ըլլալը։ Որոնց վրայ կարծէինք թէ իրաւամբ ամչնալով հիմա բովանդակութիւն ազգին մոռացութեան քողով մը կ՚ուզէ ծածկել մանաւանդ, չէ թէ նորէ նոր զարթուցանել պարծանքով նոյն գրգիռները. անոր համար շատ ցաւ տուաւ մեզի երբ այնպիսի պատուական լրագրի մը մէջ տեսանք հրատարակուած այդպիսի ճշմարտութեան ու ազգասիրութեան դէմ հատուած մը, և միակ մխիթարանքնիս այս է, որ ազգին զգօնագոյն մասը մեզի պէս դժկամակած ու զայրացած ըլլայ այդ բանիդ համար։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՎԱՆՍ Ս. ՂԱԶԱՐՈՒ 13 ՅՈՒՆՈՒԱՐ 1852

9 Dec 1814